ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

«22» դեկտեմբերի 2021 թվականի N: 428-Ա ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ «ԳՈՒՍԱՆԱԳՅՈՒՂԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ «ԼԱՆՋԻԿԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ «ՇԻՐԱԿԱՎԱՆԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՄԻԱՑՅԱԼ ԽՈՐՀՐԴԻ ԱՆՎԱՆԱԿԱՆ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 28-Ի N115-Ա, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 14-Ի N205-Ա, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 27-Ի N253-Ա ՈՐՈՇՈՒՄՆԵՐՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, «Հանրակրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետի, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 2-րդ կետի «ա» ենթակետի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի N:1392-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության օրինակելի կանոնադրության 32-րդ և 46-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2010 թվականի մարտի 18-ի N:113-Ն հրամանի 1-ին կետով հաստատված «Հայաստանի Հանրապետության «Պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության կոլեգիալ կառավարման մարմնի՝ խորհրդի ձևավորման կարգի» 3-րդ կետի 2-րդ ենթակետի, 4-րդ կետի, 5-րդ կետի 2-րդ ենթակետի, 6-րդ կետի, 7-րդ կետի,

9-րդ կետի 2-րդ ենթակետի, 11-րդ կետի, 12-րդ կետի, 16-րդ կետի, 19-րդ կետի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2021 թվականի հունիսի 3-ի N:01/09.3/11888-2021 գրությունը, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավարի 2021 թվականի դեկտեմբերի 3-ի N:1356 գրությունը, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Գուսանագյուղի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության մանկավարժական խորհրդի 2021 թվականի նոյեմբերի 23-ի նիստի N:11 արձանագրությունը, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Գուսանագյուղի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության ծնողական խորհրդի 2021 թվականի նոյեմբերի 23-ի նիստի N:4 արձանագրությունը, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Լանջիկի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության մանկավարժական խորհրդի 2021 թվականի սեպտեմբերի 20-ի նիստի N:20 արձանագրությունը, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Լանջիկի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության ծնողական խորհրդի 2021 թվականի սեպտեմբերի 20-ի նիստի N:4 արձանագրությունը, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Շիրակավանի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության մանկավարժական խորհրդի 2021 թվականի նոյեմբերի 23-ի նիստի N:7 արձանագրությունը, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Շիրակավանի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության ծնողական խորհրդի 2021 թվականի նոյեմբերի 23-ի նիստի N:3 արձանագրությունը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Դադարեցնել.

1) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Գուսանագյուղի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության կոլեգիալ կառավարման մարմնի՝ խորհրդի.

ա. Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի կողմից առաջադրված անդամ Վարուժան Խոջումյանի լիազորությունները,

բ. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի կողմից առաջադրված անդամներ Էմմա Բաղդասարյանի և Խաչատուր Ժամակոչյանի լիազորությունները,

գ. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավարի ներկայացմամբ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի կողմից առաջադրված անդամ Վասակ Ղազարյանի լիազորությունները,

դ. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Գուսանագյուղի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության մանկավարժական խորհրդի կողմից առաջադրված անդամներ Էլլա Մարտիրոսյանի և Արմինե Բալասանյանի լիազորությունները,

ե. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Գուսանագյուղի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության ծնողական խորհրդի կողմից առաջադրված՝ անդամներ Աշխեն Խաչատրյանի և Մարիամ Մարգարյանի լիազորությունները:

2) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Լանջիկի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության կոլեգիալ կառավարման մարմնի՝ խորհրդի.

ա. Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի կողմից առաջադրված անդամ Աննա Մելիքյանի լիազորությունները,

բ. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի կողմից առաջադրված անդամներ Լիպարիտ Մարտիրոսյանի և Մովսես Մանուկյանի լիազորությունները,

գ. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավարի ներկայացմամբ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի կողմից առաջադրված անդամ Կամսար Հովսեփյանի լիազորությունները,

դ. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Լանջիկի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության մանկավարժական խորհրդի կողմից առաջադրված անդամներ Լիլիթ Աշխատոյանի և Նաիրա Սարոյանի լիազորությունները,

ե. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Լանջիկի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության ծնողական խորհրդի կողմից առաջադրված անդամներ Աշխեն Մխիթարյանի և Գայանե Գրիգորյանի լիազորությունները:

3) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Շիրակավանի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության կոլեգիալ կառավարման մարմնի՝ խորհրդի.

ա. Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի կողմից առաջադրված անդամ Լյովա Ալեքսանյանի լիազորությունները,

բ. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի կողմից առաջադրված անդամներ Էդվարդ Սիմոնյանի և Սարգիս Մելոյանի լիազորությունները,

գ. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավարի ներկայացմամբ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի կողմից առաջադրված անդամ Մարատ Մկրտչյանի լիազորությունները,

դ. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Շիրակավանի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության մանկավարժական խորհրդի կողմից առաջադրված անդամներ Էմմա Մսրյանի և Թագուհի Բալոյանի լիազորությունները,

ե. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Շիրակավանի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության ծնողական խորհրդի կողմից առաջադրված անդամներ Նելլի Վարդանյանի և Լուսինե Քոչարյանի լիազորությունները:

2. Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Գուսանագյուղի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Լանջիկի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Շիրակավանի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության միացյալ խորհրդի անվանական կազմը 3 տարի ժամկետով՝ համաձայն հավելվածի:

3. Ուժը կորցրած ճանաչել՝

1) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2016 թվականի ապրիլի 28-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Գուսանագյուղի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության խորհրդի անվանական կազմը հաստատելու և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2011 թվականի փետրվարի 21-ի N:51-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» N:115-Ա որոշումը:

2) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2016 թվականի հունիսի 14-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Շիրակավանի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության խորհրդի անվանական կազմը հաստատելու և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2011 թվականի փետրվարի 21-ի N:51-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» N:205-Ա որոշումը:

3) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2016 թվականի հունիսի 27-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Լանջիկի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության խորհրդի անվանական կազմը հաստատելու և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2011 թվականի փետրվարի 21-ի N:51-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» N:253-Ա որոշումը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ Ն. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է

Հավելված
Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի
2021 թվականի դեկտեմբեր «22» N 428-Ա որոշման

ՄԻԱՑՅԱԼ ԽՈՐՀՐԴԻ ԱՆՎԱՆԱԿԱՆ ԿԱԶՄ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ «ԳՈՒՍԱՆԱԳՅՈՒՂԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ,
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ «ԼԱՆՋԻԿԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ,
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ «ՇԻՐԱԿԱՎԱՆԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

1.	Ամալյա Խաչատրյան Բագրատ Մանուկյան	Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի կողմից առաջադրված,
2.	Արաքսյա Կիրակոսյան Գրիգոր Պապոյան	Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի կողմից առաջադրված,
3.	Վասակ Ղազարյան Կամսար Հովսեփյան Կարեն Գրիգորյան	Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի կողմից առաջադրված՝ Անի համայնքի ղեկավարի ներկայացմամբ,
4.	Յուրա Մկրտչյան Օֆելյա Մկրտչյան	Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Գուսանագյուղի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության մանկավարժական խորհրդի կողմից առաջադրված,
5.	Մարինե Մկրտչյան Հովհաննես Առաքելյան	Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Լանջիկի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության մանկավարժական խորհրդի կողմից առաջադրված,
6.	Էմմա Մսրյան Վարդիթեր Գևորգյան	Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Շիրակավանի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության մանկավարժական խորհրդի կողմից առաջադրված,

7.	Արևհատ Հովեյան Քրիստինա Պետրոսյան	Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Գուսանագյուղի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության ծնողական խորհրդի կողմից առաջադրված,
8.	Քրիստինե Մկրտչյան Աշխեն Մխիթարյան	Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Լանջիկի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության ծնողական խորհրդի կողմից առաջադրված,
9.	Անուշ Մարգարյան Նելլի Վարդանյան	Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Շիրակավանի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության ծնողական խորհրդի կողմից առաջադրված:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ՝ Ն.ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է